

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵՏԱԶԱՅԵՐԵՆԻ ԲԱԹԱՊԱՇԱՐԻ ՄՇԱԿՈՒՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ
40—60-ԱՅԻՆ ԽՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վ. Լ. ԱՃԵՄՅԱՆ

XIX դարի 40-ական թթ. հաշ իրականության մեջ սկսվեց պայքար գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև աշխարհաբարը պաշտոնապես ընդհանուր լեզու ճանաչելու հարցի շուրջը։ Աշխարհաբարի իրավունքների տեսական պաշտպանության հետ միասին պայքարի առարկա դարձան վերջինիս մշակման հարցերը։ Արևմտահայ շրջաններում աշխարհաբարի դեմ ուղողված փաստարկներից մեկը վերաբերում էր նրա բառապաշարի աղքատությանը. օտար՝ հատկապես թուրքերեն բառերով խճողված էր խոսակցական լեզուն. մաքուր աշխարհաբարով գրում էին ոչ բոլոր հեղինակները։ Աշխարհաբարի հարստացման հարցը արևմտահայ մտավորականները ուշադրության է արժանանում գրապայքարի հենց առաջին տարիներից։ Այդ խնդրի իրականացման համար ժամանակի գրականության մեջ տեսականորեն և գործնականորեն նկատի են առնված երեք հիմնական միջոցներ՝ գրաբարի բառազանձի օգտագործումը, նորակազմությունները և գիտական բառերի փոխառությունը։

Ինչպես նախագրապայքարյան շրջանում, այնպես էլ այս տարիներին, գրաբարից օգտվելու անհրաժեշտությունը գիտակցվում է առաջին հերթին լեզվի մաքրությունն ապահովելու համար։ Պատրիարքարանը իր ստորև բերված պաշտոնական հայտարարության մեջ աշխարհաբարի վրա կատարվելիք միակ աշխատանքը համարում է օտարաբանությունների փոխարինումը հին հայերեն բառերով ու ոճերով. «Մեր ազգին աշխարհաբար լեզվին հիմը գրաբարն է, և հիմակու աշխարհաբար լեզունուս անկարգությունն ու անհամությունը մեջի օտար բառերն են։ Ուստի անոր մաքրությունը և գեղեցկությունը օգնել ուղողը միայն պետք է, որ անոր մեջեն օտար և խորթ բառերն ու ոճերը դուրս ձգել, ու հնար եղածին չափ անոնց տեղը գրաբար բառեր ու ոճեր մտցնելով գործածած լեզունիս մեր երանաշնորհ նախնյաց բուն լեզվին մոտեցնել։ Ահա այս է այս խնդրույն վրայ ազգին կամքը և պարտքը, և այս պետք է որ ըլլա բոլոր ուսումնականաց ալ ջանքը և պատիվ ազգին»¹։

Նվ իսկապես, այդ էլ եղավ քննվող շրջանում արևմտահայ մտավորականների մտահոգության առարկաներից մեկը. «Կարելի՞ էր ողբերգության դյուցազանց բերանը դնել այն աղճատյալ, օտար և խորթ բառերով ու բացատրությամբ լեցուն լեզուն, որ ռամկորեն անարգ անունը վերան կկրե»,— գրում է Խ. Նարայեյը արևմտահայերենով շարադրված իր Արշակ Բ ողբերգության առաջաբանում,— «բարեբախտաբար մեր հայրենի հին լեզուն կեցած է, առատ, մանավանդ թե անսպառ հանք մը, ուսկից պետք է մեր նոր լեզուն իրեն կանոն, հարստություն ու զարդարանք փնտրել։ Տղայն յուր մորը կաթովը կանանի, մեր նոր լեզուն ալ ուրիշ կերպով չէ կարող սնանիլ, աճիլ ու ինքնություն առնուլ։ Այո՛, սովով միայն կարելի է մեր խոսակցության բարբառներեն հանել ձեացուցանել մատենագրական լեզուն»։

Գրապայքարի առաջին տասնամյակներին աշխարհաբար գրականության մեջ գործածված էին բազմաթիվ գրաբար բառեր իրենց բուն գրաբարյան իմաստով². դրանց մեծ մասը մնացել է դրական լեզվում. որոշ տուկոսը այժմ հնացած է։

Քննվող շրջանի գրական աշխարհաբարում բազմաթիվ են գրաբարից վերցված արտահայտությունները, նախդրավոր բացատրությունները, դարձվածքները, դարձվածքային կապակցությունները, ինչպես՝ ցավոք սրտի — Սղ. 1864, էջ 45, առ ի չգույն — Խ. տ., էջ 79, ի դերե հա

¹ «Մասիս», Կ. Պոլիս, 1855, № 127։

² Խ. Բալթայան, Արշակ Երկրորդ, ողբերգություն, Թեոդոսիա, 1861։

³ Ինչպես գրաբար, այնպես էլ նոր բառերը ժողովրդականացնելու համար այս շրջանի որոշ հրատարակություններում պահպանվեց հայերեն բառերից հետո օտար համապատասխան բառերը փակագծի մեջ դնելու սովորությունը։ Այդպես են վարվել, օրինակ, «Բազմավեպ», «Եվրոպա», «Սեր» պարբերականները, «Մասիս»-ն ու «Արշալույս Արարատյան»-ը սկզբնական տարիներին, Գ. Զիլինգիյանը իր թարգմանությունների մեջ, Ն. Զորայանը և ուրիշներ։

նել—ն. տ. էջ 101, ի գործ դնել—ն. տ. էջ 95, և Արշ. Ար. 1867, № 301, ու, բոս կարելվույն—
Բգ. 1867, էջ 178, բոս. հաճույս—ՎՋ. էջ 81, միով բանիս—ՎՋ. էջ 90, ի սկզբան անդ, հայսմ
սասին, հակառակ հանվանե, հանձին, ի մասնավորի, ի հիշատակ, ի նպատակ, ի վիճակի, բոս մեծի
սասին, հաթոռո խոսիլ և այլն:

Գրաբարի բառապաշարից օգտվելը և առհասարակ գրաբարի ազդեցությունը այս շրջանում
մտնողովին չվերադրեց բարբառային, հատկապես Պոլսի բարբառի բառաձևերի գործածությունը
գրական լեզվից: Միասնական նորմաների չգոյությունը պատճառով, երբեմն միևնույն հրատա-
րակության մեջ օգտագործված են տվյալ բառի և՛ գրաբար, և՛ բարբառային ձևերը. վերջինների
օգտագործումը այդ շրջանում պետք է բացատրել գրական լեզուն ժողովրդին մոտ պահելու ձրգտ-
մամբ. ձգտում, որ յուրատեսակ կերպով հակադրվում էր աշխարհաբար գրաբարի հիման վրա
զարգացնելու, վերջինիս մոտեցնելու նպատակադրմանը: Հետաքրքրական է, որ երբեմն բարբա-
ռային հնչյունափոխված ձևեր հանդիպում են այնպիսի հեղինակների մոտ կամ այնպիսի հրա-
տարակություններում, որոնց լեզվի մեջ գրաբարի տարրերը շատ են. այդպես է «Բազմավեպ»-ի
լեզուն 60-ամյակի վերջին տարիներին: 1857—58 թթ. հրատարակվեցին Ալիշանի բանաստեղծու-
թյունները «նուագր» վերնագրով. մեծ մասամբ խրթին գրաբարով գրված. այդ ժողովածուի մեջ
տեղադրված նահապետի երգերի լեզուն չնայած աշխարհաբար է, սակայն, ինչպես նկատել է մա-
մանակին Մ. Նալբանդյանը, «շատ հաղթահարված հին լեզվից»⁴. այնուամենայնիվ հեղինակը
որանց մեջ օգտագործել է բարբառային ձևեր. ինչպես՝ ծաւ (չԱն, 1867, էջ 271), ուսւլ (ն. տ.,
էջ 284), աւուն (ն. տ., էջ 310):

Բարբառային բառաձևերը հատուկ էին ժողովրդի խոսակցական լեզվին և հետագայում բո-
լորովին վերացան գրական լեզվից. փոխարինվեցին իրենց գրաբար ձևերով: Գրական լեզվում
մնացին. սակայն, բարդառներում՝ հատկապես Պոլսի բարբառում գործածական բազմաթիվ բա-
ռեր, որոնք գրաբարում գոյություն չունեցող նոր արմատ են երևան հանում, ինչպես՝ պլլլիլ.
պլլլիլ — Բգ. 1866, էջ 79, 85, 190, 1868, էջ 240, կոբնիլ — ՆԱ. 1852, № 8, Բգ. 1865, էջ 223,
Բգ. 1866, էջ 233, 325, ևիւո — ՄՂ. 1864, էջ 85, 87, Եր. 1866, էջ 23, 217, Բգ. 1866, էջ 238.
տնտնալ — Եր. 1864, էջ 157 և այլն:

Գրաբար դարձվածքների կողքին բնական շրջանը գրական լեզվում տեղ են գտել բարբառ-
ներին հատուկ բազմաթիվ դարձվածքներ կամ դարձվածքային կապակցություններ. հիշենք դրան-
ցից՝ կծիկը դնել—ԵՎր. 1863, էջ 77, սուլիլ նստիլ—Բգ. 1867, էջ 141, նսււ ՎՋ. 1867, էջ 96,
տաբիբ առնել—Աստ. 1857, էջ 277, զլխուն օյուն զալ—ՎՋ. 1867, էջ 75, խելիբ զլուխը ժուլ-
վել—Բգ. 1866, էջ 211, խելիբ զլուխը զալ—ԵՎր. 1863, էջ 55, Լուն Բաշել—ՎՋ. 1867, էջ 112,
ուսը. կոնակը. ռալակը զառնել — Բգ. 1867, էջ 142 և 336, նաբպիկ փրիլ — ՎՋ. էջ 96, աշիբ
չորս բանալ—ՄԱ. 1854, էջ 17, օուրին Երեսը Էլնել—Սս. շրթ. 1868, № 848, Է1, Բաբի բոնել—
Մս. շրթ. 1868, № 846, Է1:

Կարելի է ենթադրել, որ աշխարհաբարին հատուկ այս ոճերից մի քանիսը թուրքերենի կամ
ֆրանսերենի հետևողությամբ են կազմվել, օրինակ՝ զլուխը առնել փախչիլ, թուրքերեն՝ բաշրնա
ալրպ գեթմեր.—ՎՋ. 1867, էջ 17, գործերը կԲալեն, ևն Բալեր. համեմատել ֆրանսերեն
affaire qui marche bien (Larousse universel en 2 v. 1923) Արշ. Ար. 1867, № 796, Է3:

Ստաբարանությունների փոխարինումը գրաբար բառերով չէր կարող բավարար միջոց հա-
մարվել աշխարհաբարի բառապաշարի վիճակը բարելավելու համար: Մենք այստեղ կանգ կառ-
նենք լեզվի հարստությանը վերաբերող երկու հարցի վրա. որոնք արեւմտահայ գրական աշխար-
հաբարի պատմության մեջ տեսական քննության արարկա են դարձել առաջին անգամ այս շրջ-
անում. դրանք են գրաբարի հոմանիշների և նույնանիշների իմաստային ներերանգների սահ-
մանազատման խնդիրը և նորաստեղծ բառերի ու դրա հետ կապված գիտական փոխառություն-
ների հարցը:

Դասական հայերենը աչքի է ընկնում հոմանիշների և նույնանիշների առատությամբ, որ
Նարազություն է տալիս միևնույն միտքն սլկնալ ձևերով արտահայտելու, առանց բառերի
երկնության: Արդ, լեզուների պատմությունից հայտնի է, որ գործածության ընթացքում ճիշտ
նույն նշանակություն ունեցող բառերի որոշ մասը այս կամ այն չափով ենթակա է հնացման և
էկենսունակությունից զրկվելու: Որպեսզի որևէ բառ գործածության մեջ մնա, նպատակահարմար
է, որ ունենա իր իմաստային ուրույն նրբերանգը, որ այն տարրերի այլ բառերից և զգացնել տա
իր անհրաժեշտությունը որպես արտահայտության միջոց: Նման հանգամանքները նկատի ունե-
նալով, եվրոպական, հատկապես Գրասխական բանասիրական միտքը XVIII դարի սկզբներից

⁴ Ս. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 430:

Ունի տեսականորեն, թե՛ գործնականորեն արդեն զրգովի էր հոմանիշների տարբեր առումների սահմանազատման ու որոշման հարցով: Դրանսիացի քերականագետներից մի քանիսի համապատասխան աշխատությունների ծանոթության հիման վրա 1861 թ. «Անր» պարբերականում տպագրված «Լեզու և առանձին հայերեն լեզու» հոգվածաշարի հեղինակը հայերենի հոմանիշների և նույնանիշների օգտագործման հարցը կապում է լեզվի հարստացման խնդրի հետ: Նրա սրտահայտած մտքերը հետաքրքրություն են ներկայացնում այն պատճառով, որ այդ շրջանի գրական արևմտահայերենում հաճախ բացակայում է բնականորեն վերաբերմունքը բառիմաստի ներթափանցիկ նկատմամբ, գրարարի իսկական նույնանիշների կոդքին, ինչպես՝ խոհանոց, խոհակերոց, խոհաբաղ, խոհակեր, որպես նույնանիշներ օգտագործված են նաև այնպիսի բառեր, որոնք գրարարում ունեցել են իմաստային տարբեր ներերանգներ, ինչպես՝ խույր և զլխաբկ, կախվել և պարել: Համեմատել հետևյալ օրինակները՝ 1. Պիտի փոխես ատ բաց գունով հագուստը, տիկին, պիտի հանես ատ փետրագույն խույրը (շափղա) և ատ ճերմակ մետաքսե ոտնամանները: Արշ. Ար. 1842, N 106, հ2: 2. «Բարեկյուռ անձանց աստիճանին համեմատ, իրեր չափ զլխաբկ (շափղա) շինել տվա՛վ իրեն, որ մեկըզմեկու վրա հագցուցած գլուխը կոնկրետ» — Արշ. Ար. 1842, N 112, հ3: 3. «Աշխարհի վայելչությունները սիրող մեկը, թատրոնները հաճախելը, կախվելը, ամիսն անգամ մը նորածն հագուստ մը հագնելը իրեն զվարճություն մը կհամարի» — ՆՁԸ, 1852, էջ 189: 4. «Ով որ ամենեն թեթև պարե, անշուշտ ամենեն անխաղախն է» — ՎՋ, 1867, էջ 76: 5. 1860 թ. Ճ. Արամյանի հայերեն-թուրքերեն-ֆրանսերեն աշխարհարար բառարանում կախվել և պարել թարգմանված են միևնույն հորա թեփմէք և danser բառերով: Խոհանոց և խոհաբաղ բառերը տե՛ս Արշ. Ար. 1842, N 112, հ3, ՃԱԲ, 1860, էջ 1867, էջ 132, խոհակերոց տե՛ս ԱՊՀՊՄԴ, 1850, էջ 451, Բզ. 1856, էջ 50 և Բզ. 1868, էջ 19, իսկ խոհակեր՝ ԿՎր. 1847, էջ 43 և 75, ՎՋ, 1867, էջ 36:

«Լեզու և առանձին հայերեն լեզու» հոգվածաշարում հայերենի բառապաշարի վերաբերյալ տեսակետներն ու առաջարկները կարելի է ամփոփել հետևյալ կետերում:

1. Լեզվի հարստությունը պայմանավորված չէ միայն նրա բառերի շատությամբ: Ժիշտ է, քիչ բառեր պարունակելը որևէ լեզվի համար բացարձակ աղքատության նշան է, սակայն շատ բառեր ունենալը բացարձակ հարստություն չի կարող համարվել. եթե այդ բառերից յուրաքանչյուրը շունի իր ուրույն ու ճշգրիտ իմաստը: Ինչպես է այդ տեսակետից հայերենի վիճակը: Հայերենը ունի բառաքանակի մեծ հարստություն, միայն ա տառով սկսվող արմատական կամ որպես արմատ գործածվող բառերի թիվը 600-ի է հասնում, չհաշված բարբառներում բանավոր կերպով գործածվող բազմաթիվ բառերը: Հատկապես ճոխ է մեծքայան շրջանի մատենագիրների բառապաշարը, սակայն այդ ճոխությունը մեզ քիչ օգուտ է տալիս, որովհետև նրանց բառապաշարում շատ են նույնանիշները: «Ընենք մեր նախնի մատենագիրներին կտրվինք միևնույն բանն այլևայլ գույներով նկարել, բառերու հատերու տեղ մենք անոնցմե բառերու շարքեր կառնենք, բայց ան շարքերուն մեջ տեսած անհատնիս միևնույն տեսակի անհատներ են, ուր լեզվի մեջ ամեն անհատ բառ մեյմեկ տեսակ ըլլալու է: Վերջապես անոնք մեզի բոլորովին իրարու նման կամ կատարյալ հոմանուն նույնանշաններ տված են: Անոնց հոմանուններուն (սինոնիմ) մեջ չիրևար ան գույնի խիստ բացին խիստ մութ աստիճանի զանազանությունը, ուր տարբերություններն անանկ որոշ ըլլան, որ անհնարին ըլլա զանոնք շփոթելը, զանոնք իրարու քով դնել կարելի ըլլա, բայց ոչ իրարու տեղ»⁵:

2. Ո՛րն է մեր լեզվի բառապաշարի կատարելագործման հետագա ուղին: Որպեսզի հայերենը իսկապես հարուստ և ճոխ լեզու լինի, պետք է նրա բառագիտության մեջ «նոր փիլիսոփայական ձգվածակերպություն» մտցնել, լեզուն «իր մեջն զարգացնել»⁶: Անհրաժեշտ է դրա համար միմյանցից սահմանազատել բոլոր հոմանիշները և որոշել յուրաքանչյուրի իսկական, փոխաբերական, զլխավոր և երկրորդական առումները, այդ կերպով լեզվում նույնանիշներ չեն լինի, և դրարարի բոլոր բառերը գործածության մեջ կմտնեն իրենց որոշակի իմաստով:

Բառապաշարի մշակման վերաբերյալ «Անր»-ի առաջարկությունը ժամանակին դրական գնահատականի է արժանացել Ա. Այտրեյանի կողմից⁷: Բառերի իմաստի ճշտման կարևորությունը գիտակցված է նաև 1845 թ. «Բազմավեպ»-ի «Նորահար բառերու վրա» հոգվածում⁸, այնտեղ սակայն խոսքը հատկապես գիտական բառերի մասին է: «Անր»-ի առաջարկությունը մի քայլ

5 «Անր», Կ. Պոլիս, 1861, էջ 154:

6 Նույն տեղում, էջ 157:

7 Տե՛ս «Նախաշափիղ», 1866, էջ 294:

8 «Բազմավեպ», Վենետիկ, 1845, էջ 269:

առաջ է այն տեսակետից, որ վերաբերում է հայերենի ողջ բառապաշարի ձգքուման նուրբ աշխատանքին: Ընդունելով այդ գործի համար ընտիր դրողների կարևոր դերը, հողվածագիրը նպատակահարմար է գտնում հայերենագետներից ու լեզվագետներից բաղկացած մի ճեմարան հաստատել, որի գլխավոր ծրագիրը լինի «Բնդհանուր» բառարան կազմել, «սկզբունքով ու արհեստով գրողներն ու ճեմարանը իրարմե փոփոխակի կազդվին, փոփոխակի կլուսաւորվին ու իրարու փոփոխակի կ'օգնեն»⁹:

Իժմախտաբար հողվածում գերազնահատված է բառերի առումների ձգքուման դերը հայերենի բառապաշարի հարստացման գործի համար, և քիչ ուշադրությամբ է արժանացել նոր բառեր կերտելու հարցը: Գիտակցելով հանդերձ այդ խնդրի կարևորությունը, հեղինակը ոչ մի գործնական առաջարկություն չի անում, լուծման ձևը թողնելով «առիթներին ու ժամանակին»¹⁰:

Հայերենը նոր բառերով համալրելու անհրաժեշտությունը միայն քննվող շրջանում չէ, որ զգացվել է: Բոլոր կենդանի լեզուները բոլոր ժամանակներում կյանքի առաջընթացի հետ կարիք են ունենում նորանոր տերմինների: Գրաբարը վերակենդանացնել ցանկացողները նույնպես ստիպված էին այդ պահանջը հաշվի առնել, և պատահական չէ, որ նորակազմություններ շատ պան նախադրապարարյան շրջանի ինչպես աշխարհաբար, այնպես էլ գրաբար երկասիրություններում ու բառարաններում: XIX դարի 40-ական թթ. սկսած հորաստեղծ բառերի, միևնույն ժամանակ գիտական փոխառությունների հարցը ավելի սուր կերպով դրվեց՝ կապված այդ շրջանում արատարակությունների թվի գզալի աճի հետ: Անհամեմատ չափով ավելանում է գիտության տարբեր ճյուղերին վերաբերող, մեծ մասամբ աշխարհաբար լեզվով դասագրքերի, ուսումնասիրությունների քանակը. 1840—45 թթ. Զմյուռնիայում, Պոլսում և Վենետիկում լույս են տեսնում 5 անուն պարբերաթերթ, բոլորն էլ աշխարհաբար: Այդ տարիներին է, որ բազմաթիվ մտավորականներ առաջարկում և խնդրում են Վենետիկի մխիթարյաններին կազմել նորաստեղծ բառերի մի համառոտ բառարան, որի մեջ յուրաքանչյուր նորակազմության դիմաց դրված լինելու ևս նրա ֆրանսերեն համարժեքը: 1845 թ. «Բազմավեպ»-ում տպագրված «Նորահնար բառերու վրա» հողվածում (հեղինակ Գ. Այվազովսկի) քննության են առնված հայերենի բառապաշարը նոր պահանջներին համապատասխան համալրելու վերաբերյալ այդ շրջանում առաջ քաշված երկու առաջարկ:

Ա. Նոր բառերը փոխառնել օտար լեզուներից՝ պահպանելով գրաբարի տառադարձության օրենքները: Այս կարծիքի պաշտպանները վկայակոչում են մեր նախնիների օրով հունարենից, պարսկերենից և այլ լեզուներից կատարված փոխառությունները, ինչպես սոփեր, սոփեստէս, զիդրաքմայ, դիաթիկ, փիդիսոփոս, աբուռչան, մզկիթ, պոտոֆրոնթէս ևլն: «Բազմավեպ»-ը այդ տեսակետը ընդունելի չի համարում հետևյալ պատճառներով. 1. Մեր նախնիները ճիշտ չեն վարվել տվյալ դեպքում. նրանք ավելի շնորհակալ գործ կատարած կլինեին, եթե փոխառումների տեղ հայերեն բառեր ստեղծեին կամ կազմեին, ինչպես արել են շատ դեպքում (բանաստեղծ, բնախօս, գիրք, իմաստակ, կտակ ևլն): Հենքի օրինակին հետևելը շատ այլանդակությունների պատճառ կարող է դառնալ. այսպես, ինչ կլինեի լեզվի վիճակը, եթե շոգենավ բառի տեղ վերցնեինք հունարեն Πνευματικό, բառը պիրոսկափոս ձևով, կամ լատիներեն vapor բառը բապոր կամ վապոր ձևով. եթե ֆրանսերեն bateau a vapeur և գերմաներեն dampfschiff բառերը դարձնեինք բառոյ ա վապեր և դամփսքիփ, կամ ուսներեն пароход-ը՝ պարոխոդոս: 2. Մեր հին թարգմանիչները շատ անգամ ակճա կամ ստիպված այդպես են վարվել: Գուցե նրանք իրենց ձեռքի տակ չեն ունեցել անհրաժեշտ բառարաններ, օտար բառերի ճիշտ նշանակությունը գուցե հայտնի չի եղել նրանց, և կամ այլ կարգի պատճառներից հարկադրված օտար բառեր են փոխառել: Անմտություն կլինեի կուրորեն հետևել նրանց:

Բ. Փոխանակ նոր բառեր ավելացնելու լեզվի մեջ, եղածն էլ պակասեցնել, բառապաշարում թողնել միայն ամենահին բառերը, մոտ քսան հազարի չափ և դրանց նշանակությունները շատացնել: Օրինակ, ազգ բառը ունի մոտ տասներկու նշանակություն, եթե տասներկու նոր նշանակություն էլ ավելացվի դրանց վրա, կարելի կլինի բառարանից դուրս թողնել տոհմ, ցեղ, սերունդ, ժողովուրդ, սեռ, աղն, տեսակ, կարգ, դաս և այլ բառեր, որոնց բոլորի փոխարեն կգործածվի ազգ: Այս տեսակետի դեմ «Բազմավեպ»-ը բերում է հետևյալ առարկությունները.

1. Այդ սկզբունքի կիրառման հետևանքը կլինի այն, որ խօսքի կամ գրության իմաստը հեղինակից բացի ոչ ոք չի հասկանա. որովհետև լեզվի մեջ սօր բառի միջոցով նոր նշանակու-

⁹ «Սեր», Կ. Պոլիս, 1861, էջ 157:

¹⁰ Նույն տեղում, էջ 158:

թյան ներմուծումը բացահայտ կերպով կարող է գիտակցվել, իսկ արդեն ճանոթ բառի իմաստի ընդարձակումը՝ ոչ միշտ:

Լեզվագետների պարտականությունը պետք է լինի բառերի նշանակությունները ճշգրտել և ոչ թե «ճապաղել» և ընդարձակել դրանք: Այդ կապակցությամբ հոգվածում ուշադրություն է հրավիրվում հստակապես գիտական տերմինների իմաստի որոշակիության վրա: «Աս ճշտություն» ավելի ալ հարկավոր է ուսումնական բառերուն նշանակությունը որոշելու համար, որպեսզի իմաստի շփոթություն ու հոմաձայնություն չըլլա խոսքին մեջ: Մարդկային գիտության ամեն մեկ մեծ ու պզտիկ ճյուղերը պետք է իրենց սեպհական ու հատուկ բառերն ունենան, որպեսզի թե՛ վարժապետը կարենա աշակերտին իր միտքը դյուրավ հասկցնել, և թե՛ աշակերտը վարժապետին խոսքերը հասկնալ¹¹: Բերվում է մեր հին թարգմանիչների օրինակը, որոնք Աստվաճաշնչի, կամ պատմական, ճարտասանական, բանաստեղծական այլ երկերի թարգմանության մեջ անպատճառ չեն աշխատել բնագրի մի որևէ բառ միշտ նույն բառով թարգմանել, իսկ գիտական երկերում պահպանել են խիստ ճշտություն, օգտագործելով աստուկ և որոշակի իմաստի համապատասխանող անվանումներ, ինչպես քանակ, սեռ, դադար, մակդիր, գոյական, անուն, դերանուն, բայ, մակբայ, շաղկապ, տրամաբանություն, կանոն, սահման, քերականություն ևլն: Այդպիսի դեպքերում հունարեն տվյալ բառը միշտ հայերեն նույն բառով է թարգմանված:

Այդ նույն հոգվածում ամփոփ կերպով ներկայացված են Վենետիկի մխիթարյանների առաջարկած սկզբունքները նորաստեղծ և նորմաստ բառերի բառարան կազմելու համար: Այստեղ բերում ենք այդ սկզբունքները, որովհետև հիմնականում դրանցով են ղեկավարվել արևմտահայ աշխարհարարով գրող հեղինակներից շատերը:

1. Օգտագործել գրաբարի այն գիտական բառերը, որոնք «վայելուչ» են և ճիշտ: 2. Նոր հասկացություններին անհրաժեշտ այն անվանումները, որոնք չկան գրաբարում, «վայելուչ» պով թարգմանել օտար լեզուներից, ինչպես արել են մեր նախնիները թարգմանելով հունարենից, օրինակ, *φύσις* բառը, որ կազմված է հունարեն *φύω* (յրակ) արմատից, կարելի է թարգմանել հրախալ կամ հրալին բառ: 3. Եթե թարգմանությունը հնարավոր չէ «խոհմ ղգուշավորությամբ» նոր բառեր կազմել հայկական արմատներով, այսպես՝ «ալճնպրա» բառի համար կազմված է զրահալին: 4. Այն դեպքում, երբ անկարելի է թարգմանությունը, կամ իմաստին համապատասխան նոր բառ հորինելը, թույլատրելի է օտար լեզուներից փոխառությունը (օրինակ, խահվե, շայ, գրո, միթա, քրոմ, կազ, զինք կամ զենկ, պանաև և այլն), առանց սակայն գրաբարի տառադարձության օրենքները պահպանելու: Օտար բառերից պետք է խուսափել, սակայն, որչափ որ կարելի է, «ուշափ ու կառելի է (ընդգծումը «Թարգմանալի են» է) ըսինք, վասնզի բառեր ալ կան, որ առանց կարդացողներուն միտքը շփոթելու չենք կրնար փոփոխել ու ներհական մոլորության մեջ իյնալով, ասոնք օտարազգի բառեր են ըսել ու մեկդի ձգել, անոնց տեղը անհատուկ, անհարմար սառեր ղենել, սոսանկ ան կազ, որ նույնտացվաց լեզվով ողի կամ ողի ըսել է, զինք կամ զենկ, որ մետաղ մըն է, պանաև, որ շնդկաստանի ծառ մըն է և այլն: Իայց այսպիսի բառեր, որ ամեն ազգաց մեջ ալ նույն խիստ շատ չեն»¹²:

Նորահար բառերի բառարան շնորհաբանվեց Վենետիկում¹³: Իհիայն 1891 թ. լույս տեսավ Լ. Քաջունու «Արուեստից, գիտութեանց և գեղեցիկ դարութեանց» ընդարձակ եռահատոր ֆրանսերեն-հայերեն բառարանը, որի վրա հեղինակը աշխատել է մոտ 40 տարի և որ պարունակում է շատ նորակերտ բառեր: Նորակազմություններ բաղմաթիվ են նաև քննվող շրջանում հրատարակված օտար-հայ կամ հայ-օտար բառարաններում, որոնցից հիշենք՝ Հ. Պողոսյանի «Համառոտ բառարան տառականն ի հայ» (Վիեննա, 1841, Բ. տպ. 1856), «Nuovo dizionario italiano francese-armeno-turco compilato sui migliori vocabulari di queste quattro lingue dai padri della congregazione Mechitaristica» (Վիեննա, 1846), «Նոր բառգիրք հունարէն, իտալերէն, հայերէն, տաճկերէն յօրինեալ ջանիք և ծախիք եղբարց հարազատաց Արիստակեսայ և Ստեփանոսի Ազարեանց» (Վիեննա, 1848), Սր. էմինյանի «Երեքլեզուեան բառագիրք այսինքն դադղիերէն-հայերէն-տաճկերէն» (Վիեննա, 1853), Ո. Արամյանի «Համառոտագոյն բառարան արդեան լեզուի հայերէն ի տաճ. ի ֆոանս.» (Փարիզ, 1860), Տ. Զոյազյանի «Նոր բառարան հայերէնէ ի յունարէն» (Կ. Պոլիս, 1868), Հ. Ավգերյանի «անգլերեն-հայերեն բառարան» (Բ. տպ. Վենետիկ, 1868, Ա. տպագրությունը 1821-ին):

11 «Թարգմանալ», Վենետիկ, 1845, էջ 270:

12 Նույն տեղում, էջ 267:

13 Տե՛ս «Հիսկատար ցուցակ գրոց մխիթարյան տպարանին (1716—1934)», Վենետիկ, 1934

Ինչպես արդեն նշել ենք, նոր բառեր ստեղծելու խնդրով հավասարապես շահագրգռված էին զորարարի և սշխարհարարի համակիրները. բավական է ասել, որ վերը հիշված բառարաններից զորարար լեզվով են շ. Պոպաճյանի (1841 և 1858), 1846 թ. Վիկենայի մխիթարյանների, էմինյանի (1853), Զոլագյանի (1868), Ավգերյանի (1821 և 1868 թ.) բառարանները:

Մենք այստեղ կխոսենք աշխարհարար գրականության մեջ նույն տարիներին օգտագործված նորիմաստ զորարար բառերի, նորակազմությունների և փոխառությունների մասին, առանց մեղ նպատակ դնելու որոշել նրանց առաջին դործածության տեղն ու լվականը¹⁴:

Նոր հասկացություններ արտահայտելու համար հնարավորության սահմաններում օգտագործվեց հին հայերենի գանձարանը: Գրաբար որոշ բառեր օգտագործվեցին նոր իմաստով, այնպես, ինչպես դրանց համապատասխանող լատիներեն կամ հունարեն անվանումները նոր եվրոպական լեզուներում. որպես օրինակ հիշենք բղնջի և էլուպատոս բառերը. նշմ-ում դրանց երկուսի նշանակումները համընկնում է հոմեոկան կոնսուլի իմաստին:

Բղնջի — Έπιστάτης, consul, հիւպատոս, դուքս, սահմանակալ, կողմնակալ, կուսակալ, զորավար, մագիստրոս, բղնջի կոչիւր և տարեկոր իշխանն կամ պետն ձերակուտին հոովմայ. աե՛ս հիւպատոս (ՆՇԲ. հատ. 1):

Էլուպատոս — Քառ յունարէն իրազոս :... և... որ բոս լատիներենի՝ գոնսուլ, consul. Բղնջի, իշխան, հրամանատար, փոխարքայ, տարեկոր դործակալ կամ կուսակալ (ՆՇԲ. հատ. 2):

Նոր ժամանակներում, եվրոպական դիվանագիտության մեջ կոնսուլ (consul) անունը սկսեց արվել այն պաշտոնյային, որ ուղարկվում է մի որևէ կառավարության կողմից մի օտար վայր՝ այդ կառավարության հպատակների ապահովության և նրանց իրավունքների պահպանման վրա հսկելու համար, մինևույն ժամանակ որոշ վարչական և դատական պաշտոններ կատարելու: Այդ իմաստով են օգտագործված Բոնյի և Էլուպատոս բառերը XIX դարի կեսերի արևմտահայ մամուլում, աե՛ս եվր. 1847, էջ 72, 1848, էջ 26, Արշ. Ար. 1843, N 144, է3, Մս. 1852, N 1, է4, Մս. 1856, N 254, է2, էյն:

Բերենք մի այլ օրինակ: Պաշտոնյա, բառը նշմ-ում հետևյալ կերպ է բացատրված. «պաշտոյ, պաշտօնատար, սպասահարկու, սպասաւոր, minister»: Արդարեւ, minister, լատիներենում նշանակում է պաշտոնյա, մարդ, որին հանձնարարված է մի որևէ գործ կատարել: Արդի եվրոպական երկրներում մինիստր (աե՛զլ. minister, ֆր. ministre, իտ. ministro (կոչվում է այն անձը, որին գործադիր իշխանության կողմից հանձնարարված է ղեկավարել պետական վարչության ճյուղերից մեկն ու մեկը, օրինակ՝ ներքին գործերի մինիստր: Քննվող շրջանում պաշտոնյա բառը այդ նշանակությամբ աե՛ս եվր. 1847, էջ 2, Մս., 1852, N 5, է3, Արշ. Ար. 1867, N 803, է1, էյն:

Նույն կարգի բառերի թվին է պատկանում ծրածան, որ գրաբարում նշանակում էր միայն ձիրանի գոտի և լուսառիլյուտ շոգի: Նշմ-ում այդ բառի դիմաց գրված է ԻԲՏ-ԻՅԻՏ (լատիներենը հունարենից է փոխ առել. հունական դիցարանության մեջ Իրիս ձիրանի գոտին ներկայացնող աստվածուհու անունն էր): Հետագայում, եվրոպական լեզուներում ԻԲՏ նշանակեց նաև աչքի շունավոր մասը, որ կազմված է կլորածև թաղանթից: Այդ իմաստն ունի արդեն Մ. Զախչախյանի իտալերեն-հայերեն (1804) բառարանը. 1837 թ. նույն հեղինակի հայ-իտալերեն բառարանում այն արտահայտված չէ: Աշխարհարար գրականության մեջ ծիածան իր նոր գործածությամբ լիեջանաբանում է XIX դարի կեսերին աե՛ս եվր. 1847, էջ 27, ՄԻՏՁՍ, 1852, էջ 373 և ՂՏՏԶ, 1865, էջ 217: Նշենք, որ 1560 թ. Ճոնիկ Արամյանի աշխարհարար հայերեն-թուրքերեն-ֆրանսերեն բառարանում ծիածանի դիմաց գրված է միայն էլէյմի-սէմա, arc-en-ciel:

Գրաբար որոշ բառեր օգտագործվեցին նոր նշանակությամբ, անկախ դրանց համապատասխանող լատիներեն կամ հունարեն բառի ստացած նոր իմաստից. այսպես՝ Ոստիկան, ոստիկանություն—գրաբարում ոստիկան նշանակում էր վերակաջու, տեսուչ, դիտապետ, իշխան, դիտավոր հրամանատար, հոգաբարձու, կուսակալ, այժմ՝ կարդապահության հսկող հասարակ քաղաքապահ (police), ոստիկանությունը (police) համապատասխան մարմինն է. վերջին իմաստով աե՛ս եվր. 1847, էջ 2, 23, 31:

Պաղպաղակ—նշմ-ում բացատրված է «սուռնատեղակ քար, խափանցիկ, փայլուն, որպես վունակն և բիրեղ»: Հետագայում այդպես անվանվեց դոլաֆուցիլ ուտիլիթը, որ պատրաստում են

¹⁴ Այդ գործի համար անհրաժեշտ է ձևերի տակ ունենալ վերջին դարերի գրաբար և աշխարհարար գրականության համարաբար քաղաքաբար և բոլոր բառարանները, այսպես էլ արևելի է ընկնել սխալումների մեջ:

կաթից, շաքարից, զանազան մրդերից (թրք. դոնդուրսա): Վերջին իմաստով օգտագործված է 1847 թ. նվր.-ի 44-րդ էջում:

Փարույր—նշխ-ի բացատրությունն է ռիսազ շաքարակ սնի փաթաթկալ ձևով: 1848 թ. նվր.—ի 27-րդ էջում այդ բառն օգտագործված է հրացանի փամփուշտի իմաստով:

Քննվող շրջանի դրական լեզվում մեծ թիվ են կապում նորակերտ բառերը՝ Դրանց մի զգալի մասը օտար բառերի ճիշտ թարգմանությունն են, օրինակ՝ բնկերականություն (սոսիալիզմ)—նվր.—1848, էջ 85, բազմարվեստյան (polytechnique, բազմարվեստյան դպրոց)—նվր. 1830, էջ 2, ժանյակ (թանթելա, ֆր. dentelle բառից)—ՄԳՏԶ, 1852, էջ 31, անգրամա (anagramme)—Արև. 1855, էջ 284, օւսեւ-մուշ (oiseau-mouche)—նվր. 1863, էջ 147, գաղափարախոս (idéologue)—Բդ. 1866, էջ 16, նոսրալուփ (manomètre)—Բդ. 1866, էջ 71, կազմնագիծ (profil)—Բդ. 1866, էջ 184, անխառնակ (antichambre)—ՎՁ. 1867, էջ 84, ԼԻ. 1867, էջ 161:

Որոշ թվով նորակազմություններ եվրոպական բառերի մոտավոր թարգմանություններ են կապված. այդ դեպքում կամ բնատիպի որևէ ածանցի փոխարեն հայերեն բառ կամ արմատ է դրված. կամ բնատիպի բողազրիս արմատին կամ դրանցից մեկն ու մեկին համապատասխանում է մոտավոր իմաստ ունեցող հայերեն որևէ բառ կամ արմատ. օրինակ՝ նյութակրոնություն (matérialisme)—նվր. 1848, էջ 162, Ս. 1866, էջ 23, matérialisme ստորին լատիներեն materialis (նյութական) բառից է, չունի կրոն (վարդապետություն) արմատ:

Դարստուփ (թեոռաղա)—ՄՍ. 1852, № 24, Ե՝. թեոռաղա (ֆր. terrasse) լատիներեն terra—ցետին բառից է:

Հասարակավար (բոմյունիսթ)—ՆՁԼ՝ 1832, էջ 228. communiste բառի արմատն է, լատիներեն communis (հասարակ, բնդհանուր):

Վաճառաբերություն (էնթորթասիոն)—Արշ. Ար. 1867, № 806, Ե՝, importer (լատիներեն importo, in (մեջ, ներս) և porto (բերում եմ) բառերից կամ importation բառերի մեջ չկա վաճառ արմատը: Վաճառահանություն (էքսթորթասիոն)—Ն. տ.:

Կաս նորակազմություններ, որոնք տալիս են օտար բառերի իմաստը, առանց նվազագույն չափով դրանց թարգմանությունը լինելու. այսպես՝

Հափակակի (baobab)—ՄԳՏԶ, 1852, էջ 77, նվր. 1863, էջ 110: Baobab սենեղալյան բառ է. դա մի ծառ է, որ աճում է Սենեղալում և ապրում է 6000 տարի. բոտ երևույթին նրա երկարակեղևությունը նկատի ունենալով՝ ստեղծվել է հափականի, հափականիմ (տեկ) բառից:

Պղնձանագ (bronze)—ՄԳՏԶ, 1832, էջ 231. Bronze խալերեն bronzo բառն է, որ բոտ DEQ-ի կարելի է ենթադրել առաջացած Brindisi քաղաքի անունից: DFL մեջ է բերում երկու կարծիք. համաձայն որոնց bronzo կապվում է 1) bruno (թուխ)-ից կազմված brunizzo, bruniccio բառերի հետ. շեշտի տեղափոխությամբ, 2) ստորին լատիներեն brunus (կապարադույն ֆր. livide)-ի հետ:

Վանաքս (quartz)—ՄԳՏԶ, 1852, էջ 331. գերմաներեն quartz կապում են կամ գերմ. warze (պտուկ, դնդակ) կամ լատիներեն quadratus-ի հետ (DFL):

Նրափրիուր (lave)—ՎՁ. հատ. 3, 1868, էջ 51: Խալերեն lava բառի ծագումը անհայտ է. կան ենթադրություններ, համաձայն որոնց lava առաջացել է լատիներեն laves—առկում (DEQ) կամ lavare լվանալ (DFL և CEI) բառերից:

Ստար բառերի թարգմանությամբ կամ իմաստի հետեղությունամբ ստեղծված նորակազմությունները մեծ մասամբ գրսից ներմուծված գաղափարներ, հասկացություններ են արտահայտում: Քննվող շրջանի աշխարհաբար դրականություն մեջ կան նաև բազմաթիվ նոր բառեր, որոնց սահմանափակությունը պայմանավորված չէր օտար լեզուների ազդեցությամբ: Դրանց մեջ պետք է տարբերել.

1. Սովորական կյանքին վերաբերող բառեր, ինչպես՝ վիճարար — նվր. 1850, էջ 151, ունաբույժ—Ն. տ., կառագործ—Բդ. 1852, էջ 49, կամակառու—Մա. 1852, № 1, Ե՝, 1856, № 217, 63, բեկարույժ—Մա. 1852, № 22, Ե՝, տակառագործ—ՆՁԼ՝ 1852, էջ 59, քամրագործ—ԼԻ. 1867, էջ 136, կն:

րոսական բառերով և ուներով լցրին¹⁷։ Աշխարհարարով գրող ոչ բոլոր հեղինակներն էին, որ ղեկավարություն էին հանդես բերում նորարանությունները հարցում, և երբ 1860 թ. Մեղու-ն, աշխարհարարի պաշտպանությանը սվիրված «Աղղային լիպու» վերնագիրը կրող հոդվածում օգտագործում է «առ կախուկ» արտահայտությունը (ստիճակ ու մեծարանքով յորս բոլորը կշարվին մարդիկ առ կախուկ իր ձայնին, որ է ձայնն անցյալին¹⁸), իրավամբ արժանանում է «Փարիզ»-ի ըննադատությանը։ Պահպանողական դասը երբեմն դժկամակությամբ էր ընդունում աշխարհարար դրականության մեջ տեղ գտած նաև ոչ անհարկի նորարանությունները։ Կ. Ությունյանը պատմում է հետևյալ միջադեպը։ Գերագույն ժողովի արտակարգ նիստ ունենալը ծանուցանելու համար «Մասիս»-ում նա մի անգամ օգտագործում է «կարդե դուրս» արտահայտությունը։ Ֆրանսերեն *extraordinaire* բառի իմաստով, Այգ կապակցությամբ խիստ նկատողություն է ստանում խորասանձյան ամիրայից, որ հայտնում է նրան բոլոր ամիրաների զայրույթը այդ անպատշաճ խոսքի համար և այդ պատճառով լրագիրը խափանելու նրանց որոշումը։ Բարերախոտարար Ությունյանին հաջողվում է համոզել Փարիզում նախնական կրթությունը ստացած խորասանձյան ամիրային, վերջինիս միջոցով նաև մյուս ամիրաներին և սպառնալիք իրեն սպառնացող պատ-

միջոցով։

Հիշենք այստեղ Գերագույն և հոգևոր ժողովների, ինչպես նաև պատրիարքի բացառիկ խիստ վերաբերմունքը ն. Ռուսինյանի լեզվական խնդիրները աշխարհային նորարարությունների նկատմամբ։ Ռուսինյանը մեկն էր այն հայ երիտասարդներից, որոնք սովորելով Փարիզում (ուի-Ֆիլիպի իշխանության տարիներին՝ ականատես էին եղել 1848 թ. հեղափոխությանը, այդ ժամանակ է, որ տապալվեց միապետությունը, հիմնվեց ընդհանուր քվեարկությունը, տարածվեց սամանադրության գաղափարը։ Նթն հեղափոխության ոգով համակված այդ երիտասարդներից ոմանք, ինչպես ն. Ջորայանը, ժողովրդի և աշխարհարարի շահերը պաշտպանելով հանդերձ, լեզվի հարցում ծայրահեղությունների մեջ չընկան, Ռուսինյանը ամբողջական կլանված նորոգության գաղափարով, առաջարկեց փոխել նույնիսկ ամիսների ընդունված անունները 1855 թ. Կ. Պոլսում հրատարակված իր Տարեցույցում ամիսները 30 օր հաշվելով, ինչպես արվել էր ֆրանսիական սոաջին հանրապետության ժամանակ, դրանց օտար անուններն էլ փոխարինում է միամիս, երկամիս, եռամիս, քառամիս, հինգամիս, վեցամիս, հոթամիս, ութամիս, ինամիս, տասամիս, տասմիամիս, տասերկամիս հայերեն անվանումներով։ Բացի սրանցից, ֆրանսիացի բանաստեղծ Ֆարրոլեյանտինի հնարած և 1793 թ. ֆրանսիական հանրապետության ընդունած բանաստեղծական ամսանունների հետևողությամբ՝ Ռուսինյանը ստեղծում է ա. զարնան ամիսների համար՝ Բուսիկ, այսինքն բուսյի ամիս (ֆրանսերենն է Germinal), Մալկիկ, ծաղկի ամիս (Floreal), Մարգիկ, մարգի ամիս (Prairial), բ. ամառային ամիսների համար՝ Նիսար, հունձրի ամիս (Messidor), Տոթար, տոթի ամիս (Thermidor), Պողար, պողարի ամիս (Fructidor), գ. աշնան ամիսների համար՝ Կրոկ, այգեկուլի ամիս (Vendémiaire), Խափոկ, տերեւները թափելու ամիս (Exfoliaire), Միլոկ, մեղի ամիս (Brumaire), դ. ձմեռային ամիսների համար, Չյունկ, ձյունի ամիս (Nivôse), Սառունկ, սառույցի ամիս (Glacière), Մրրկեր, մրրկի ամիս (Ventôse)²⁰։

Տարեցույցը, որի մեջ առաջարկված էր նաև տարեգլուխը ընդունել մարտի 21-ը, պարունակում էր գիտական ուսումնասիրություններ ու պատմական տեղեկություններ, սակայն տոմարի և ամսանունների վերաբերյալ իր նորարարական առաջարկների պատճառով արժանացավ պաշտոնական պարսավազրի։ Հոգևոր ժողովը, Գերագույն ժողովի համաձայնությամբ, պատանջեց եկեղեցում բանադրել այն, պատրիարքը բավականացավ կարգադրելով՝ զրգաշատներից հավաքել բոլոր օրինակները։

Ռուսինյանի կազմած ամսանունները գեղեցիկ և նույնիսկ բանաստեղծական էին, սակայն, ոչ անհրաժեշտ, դրանց ընդունումը կխախտեր աշխարհի երկրների մեծամասնության մեջ, ինչպես նաև Հայաստանում դարձի ի վեր արմատավորված մի սովորույթ։ Նոր բառերի օգտագործ-

17 «Բազմավեպ», 1845, էջ 267։

18 «Մեղու», 4. Պոլիս, 1860, էջ 263։

19 «Բազմավեպ», 1944, էջ 72։

20 1902 թ. «Հանդես ամսարյան»-ում (էջ 105), լուսանկարված է ն. Ռուսինյանի ձեռագիրը իր հորինած ամսանուններով, յուրաքանչյուրի դիմաց հեղինակը գրել է նաև համապատասխան ֆրանսերեն անունը։ DEU-ում այդ ամսանուններից երկուսը տարբերվում են Ռուսինյանի բերած ֆրանսերեն անուններից, Exfoliaire ի փոխարեն նույն բառարանը ունի Frimaire, իսկ Glacière-ի փոխարեն Pluviôse։

ման հարցում աղատամիտ վերաբերմունքի արդյունք էր նաև այնպիսի բառերի ընդունումը, որոնք անհրաժեշտ չլինելուց բացի գեղեցիկ ու ներդաշնակ էլ չէին. ինչպես՝ իշակէս — mulet (ճ՝ԱԼ՝, 1860), կնական — cuminine (ԼԹ, 1867, էջ 122) ևլն:

Նորաստեղծ բառերի հետ սերտ առնչություն ունի օտար փոխառությունների խնդիրը: Այդ պայակցությամբ պետք է տարբերել նվրդական լեզուներից նոր դիտական տերմիններ փոխառնելու տեսությունն ու գործնական աշխատանքը: Թուրքերեն բառերի օգտագործման հարցիչ մասումնասիրելով այս շրջանի վերաբերյալ գրականությունը, մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

Ա. Գրական լեզվում թուրքերեն բառերի օգտագործման դեմ պայքարը հետևողական կերպով մղվեց թե՛ տեսականում, թե՛ գործնականում. այն ժամանակ, երբ հասարակ ժողովրդի բուսական լեզուն ընդհանուր առմամբ մնում էր այդ կարգի բառերով խճողված: Քննվող շրջանում մաքուր աշխարհարարով են հրատարակվում «Բաղմավեպ» (Վենետիկ), «Նվրդական» (Վիեննա), «Մասիս» (Կ. Պոլիս), «Հայրենասեր» (Զմյուռնիա), «Արշալույս» Արարատյան (Զմյուռնիա) և այլ պարբերականներ. մաքուր աշխարհարարով գրվում և թարգմանվում են նաև բաղմավ գիտական, գեղարվեստական երկեր, պատգամներ, որոնցից հիշենք Ա. Գալֆայանի «Համառոտ պատմություն հին ազգաց» (Վենետիկ, 1849), Նույնի «Համառոտ պատմություն միջին դարու» (Վենետիկ, 1850), Ղ. Հովսեփյանի «Մեծն Ներսես և Հայաստանի վրա ունեցած ազդեցությունը» (Վիեննա, 1851), Ն. Զուրյանի «Ներքնաբերությունը» (Կ. Պոլիս, 1852), Ս. Կաթարյանի «Տարվույն չորս եղանակները» (Վիեննա, 1852), Մ. Պեշկեթալյանի «Կոռնակ» ողբերգությունը (Կ. Պոլիս, 1850), Մ. Քաջունու «Համաբողություն»-ը (Վենետիկ, 1859), Վոլտերի «Զատիկ»-ը՝ Մ. Ամուրյանի թարգմանությամբ (Կ. Պոլիս, 1867), Ա. Մ. Գարազայանի «Համառոտ փոխառություն»-ը (Կ. Պոլիս, 1868) ևլն: Հատուկինտ հեղինակներ ժամանակավոր կերպով իրենց թույլ տվեցին թուրքարանություններ օգտագործել, այն էլ որոշակի նպատակով: Այսպես, Հ. Սվաճյանի կարծիքով, մինչ այդ ազգի մեջ ընթերցասիրության տարածված չլինելու զլխավոր պատճառներից մեկը հրատարակությունների անհասկանալի լեզուն է: «Վասնզի,— գրում էր նա 1859 թ.,— ինչպե՛ս կուգենք, որ ժողովուրդը ընթերցասեր, հետևաբար ուսումնասեր ըլլա. երբ ազգսին սառույց ուտելուն պես, որ ակոսներուն տակ բան մը կծամեր, ու փորը բան մը չէր երթար, կարգա, կարգա ու բան մը չհասկնալով, մեկդի կթողու ու նարտը կամ թուղթը ետադա՞ր: Այդ պատճառով Սվաճյանը նպատակահարմար էր գտնում հասարակ ժողովրդի համար նախատեսված հոդվածները գրել թուրքերեն բառերով խառն, նա մտածում էր, որ այդ ձևով ընթերցասիրության փափաղը ժողովրդի մեջ արծարծելուց հետո կարելի է աստիճանաբար ստարաբանություններից ազատվել: Այդպիսի հոդվածների կողքին «Մեկուս»-ում տպվում էին նաև մաքուր գրական աշխարհարարով գրություններ:

Բ. Ինչպես տեսականում, այնպես էլ գործնականում արեւմտահայերը դեմ չեն եղել նորագույն գիտական տերմինները անհրաժեշտության դեպքում նվրդական լեզուներից փոխառնելուն: Քննվող շրջանում այդ տեսակետը պաշտպանվել է ոչ միայն «Բաղմավեպ»-ի (տե՛ս վերը նշված Գ. Այվազովսկու հոդվածը), այլ նույնիսկ պրաբար բառարանագիրների կողմից: Վիեննայի խիթարյանները իտալերեն-ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն բառարանի (1846) առաջարկում, խոսելով այդ աշխատության մեջ կիրառված օտար բառերից զգուշանալու սկզբունքի մասին ավելացնում են. «Այլ սովին ոչ եթէ դադատութիւն յեղուին, զոր ի սմին ըստ իւրում չափու վալել, բառնայ ինչ կամէար, վասն որոյ, ուր այնպիսի էին անուանքն, դի չէր ինչ մարթ նոցիս հայերէն վայելու: անուանս կազմել, որպէս լպաթ, դինկ, աղկադի և այլքն յայնժամ զնոսին առնալ եղաք»:

Աշխարհարար գրականության մեջ այդ շրջանում օգտագործված բաղմավ գիտական փոխառություններից հիշենք՝ ուսիս, փլալին, բլադին, կազ, գինկ, նիլել, բլուր, ալբուլ, յոտ, աբուլ, ետդրիոն, զոսլալդ, բուլ, մասկանեզ, երեւ, ամմոնիալ, բողասիոն, սողիոն, սոսուս, առոո, միֆա, սգիմուտ, ամալկամ, բալլատրոն, ախիւնիլ, բելոբիոն, սալամանդր, բալչուզ, գենիլ, մերոտ)

Ածխածնիտ (carbonite) — ԲՆՓԲ, էջ 348, ծծմբիտ (sulfite) — ԲՆՓԲ, 1850, էջ 85, և նման բառերում փոխ են առնված միայն վերջածանցները, ֆիզիկալիս — Սր, 1862, էջ 129, 200, 210, 211, ԼԹ, 1867, էջ 38, 60, որսիտացուլ, բիմիադիտ — ԲՆՓԲ, 1856, էջ 55, բլալվոր — Բգ, 1858, էջ 380, քլորալկեւոլ (chloroforme) — Նվր, 1848, էջ 212, բառերի արմատը կամ արմատներից մեկը:

Երբեմն տարբեր հեղինակների աշխատություններում հանդիպում են միևնույն տերմինի փոխառյալ և նորակերտ հայերեն ձևերը, ինչպես հաստատել (ՄԳՏԶԵ, 1852, էջ 5) և երանիք (ԼԹ, 1867, էջ 92), վլարին (Բգ. 1845, էջ 161, ԲՆՓԲ, 1856, էջ 38, 52, 75, ՂՏՏԲ, 1865, էջ 23) և լսնուկի (ԿՎր. 1863, էջ 93), փոսփոռ (ՄԳՏԶԵ, 1852, էջ 245) և լուսակիր (ԲՆՓԲ, 1856, էջ 89), ավլակ (ԲՆՓԲ, 1856, էջ 102) և ամմոնիալ (Բգ. 1866, էջ 175, 1869, էջ 73), Բիմիա (ԵՎր. 1863, էջ 14, ՂՏՏԲ, 1865, էջ 4) և տաբուլոմորֆոն (Սր. 1861, էջ 139, ԲՆՓԲ, 1856, էջ 4) կամ բնալուծություն (ԲՆՓԲ, 1856, էջ 4):

Միասնական նորմաների բացակայության հետևանքով օտար փոխառությունները տառադարձված չեն միևնույն սկզբունքով, կիրառված են միաժամանակ դրաբարի և արևմտահայերենի տառադարձության օրենքները, համեմատել հետևյալ բառերի ուղղագրությունը՝ մեդուսա (Ֆր. meduse) — Բգ. 1845, էջ 163, օքսիտ (Ֆր. oxyde) — Ն. տ. էջ 161, կազ (Ֆր. corail) — ՄԳՏԶԵ, 1852, էջ 238, կորաղիոն (հն. շոշառու՝ Ֆր. corail) — ՄԳՏԶԵ, էջ 240, մաթեմատիկյան (Ֆր. mathématique) — ՂՏՏԲ, 1865, էջ 69, մոլիպդեն (հն. լոսյոն՝ Ֆր. molybdène) — ՂՏՏԲ, էջ 23, ԲՆՓԲ, էջ 38, մոլիբդեն — ՄՍՀԲԳ, 1842, էջ 25):

Այստեղ նշված բոլոր փոխառությունները կատարված են եվրոպական լեզուներից: Եթե չհաշվենք մի քանի հեղինակների, բարեբախտաբար ոչ բաղմամբիվ, որոնք չափազանցությունների մեջ բնական եվրոպական փոխառությունների հարցում (մեր կարծիքով աններելի են բազա — ՎՀԹ, 1868, հտ. 3, էջ 159, պեպեկ — Ն. տ., էջ 167, չմինհա — Ն. տ., էջ 172, իթօփի — Մ, 1864, էջ 285, իտլա — Ն. տ., էջ 299, բանորամա — ԼԹ, 1867, էջ 125, բարլամենթ — Բգ. 1843, էջ 93, Արշ. Ար. 1867, № 798, ԼՂ, 1869, № 871, ԼՂ, ապա կարելի է ասել, որ բնականորեն մամբ այդ տարիներին արևմտահայերը օտար փոխառությունների դիմեցին անհրաժեշտություն չկարգելով:

ՀԱՄԱԽԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արշ. Ար. — Արշայույս Արարայան, Ձմյունիա: Բգ. — «Բազմապեպ», Վենետիկ: ԵՎր. — «Եվրոպա», Վիեննա: ՎԶ — Վոլտեր, Ջատիկ. Կ. Պոլիս, թրգմ. Մ. Մամուրյան: ԱԳՂՊՄԴ — Ա. Գալֆայան, Համառոտ պատմ. միջին դարու, Վենետիկ: ԲՎ — Բարոյական վեպեր, Վիեննա: ՄԳՏԶԵ — Մ. Գաթրոնյան, Տարվույն չորս եղանակները, Վիեննա: Մս. — «Մասիս», Կ. Պոլիս: ԵԶԸ — Ն. Զորայան, Լեթերյասիրություն, Կ. Պոլիս: ԼԹ. — Համարտին, Լեթայի, Ձմյունիա. թրգմ. Գ. Զիլինգիրյան: ՎՀԹ — Վ. Հյուգո, Թշվառներ, Ձմյունիա. թրգմ. Գ. Զիլինգիրյան: Արև. — «Արևիկ», Փարիզ: ԸԱԲ — Ը. Արամյան, Համառոտագույն բառարան արդյան լեզվի հայերեն ի տաճ. ի ֆրանս. Փարիզ: ՂՏՏԲ — Ղ. Տերտերյան, Տարերթ Բնագիտության, Վիեննա: ՆԱ — «Նորայան աղավնի», Կ. Պոլիս: Սդ. — «Մեղու», Կ. Պոլիս: Եր. — «Երևակ», Կ. Պոլիս: Աստ. — Աստվածաշունչ, Կ. Պոլիս: ԲՆՓԲ — Բ. Նուրիճանյան, Փորձառական բնագիտություն, Վիեննա: ՂԱՆ — Ղ. Ալիշան, Նվագք, Վենետիկ: Ս. — «Սիրոն», Երուսաղեմ: Մ. — «Մաղիկ», Ձմյունիա: ՄԱ — Մոլիեր, Ազան, Ձմյունիա: ՆՀԲ — Նոր Հայկազյան Բառարան, Վենետիկ: Սր. — «Սեր», Կ. Պոլիս: ՄՍՀԲԳ — Մ. Սաղաթկյան, Համառոտ բնական գիտություն, Վիեննա: Ե-Երևա: DEQ — Dictionnaire encyclopédique Quillet. DFL — E. Littré, Dictionnaire de la langue française. CED — Chambers's English dictionary.